

Մինչև կերկեր հնչեցէ զժամ քոյին մահ ,
 Յաւերժութիւն բացցէ զկայանս իւր անմահ .
 Սուացութեան ցօղէն ըզդիզ արտասուք ,
 Ղնայ հողածին մարմին 'ի հողն ապաշուք .
 Սլացեալ հոգւոյն յաստուածայինն 'ի յաղբիւր՝
 Ի պատճառէն իւրմէ խնդրէ զվըճիուն իւր :

ՏԸ ՓՈՆՓԻՆԵԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՕԳՏԱԿԱՐ ԳԻՏՈՒԹԻՒՆՔ

Պիտեւի Կանի ի զգիտութեանց վրայ :

ՍԱՐԴՈՒՍ բնութեան յատուկնշա-
 նը գիտութիւն կամ բան սորվին ըլլա-
 լով՝ ազգերնուս յառաջագիտութեանը
 համար ստեպ կը յորդորենք գիտու-
 թեանց և կըթուութեան հետեւելու .
 կ'ուզենք երբեմն ալ զանազան գիտու-
 թեանց վրայ տեղեկութիւն տալ, անոնց
 բնութիւնը և օգուտները իմացնել,
 թէ ո՞րը աւելի օգտակար է, որին պէտք
 է աւելի հետեւիլ, ո՞րն է բուն լաւն և
 ազնիւն, և ո՞րն աւելի հիմակուան վի-
 ճակիս համար հարկաւոր է, բայց ոչ այն
 պէս օգտակար և ազնիւ ըստ ինքեան :
 Սիայն առաջուցմէ աս կ'իմացնենք ըն-
 թերցողաց, որ թէ երբեմն մեր դա-
 տաստաններուն մէջ սովորական եղած
 կարծեաց դէմ բաներ գտնեն, իրենք
 ալ նախապաշարմունքը մէկդի թողուն,
 որպէս զի յայտնի իմացուի թէ որուն է
 իրաւունքը որուն է սխալը :

Ա.

Պատճառութեան, և Ղգային պատճառութեան :

ՍԻՐԻՍԻՒՄԵԱՆ համար ամենէն զօրա-
 ւոր միանգամայն և ամենէն զուարճալի
 գիտութիւն՝ Պատմութիւնն է, որով
 ամենէն ալ օգտակար . վասն զի ամէն
 գիտութիւնք կը ցուցնեն ինչ որ մար-
 դէս դուրս է, կամ բարոյական մարդէս՝
 որ է բուն մարդկութիւն, իսկ պատմու-

թիւնը կը ցուցնէ՝ մարդուն հանդիպած
 և հանդիպելու դիպուածները : Արկրիս
 վրայ 7000 տարուան մէջ մարդկանց
 պատահարները ինչ են, եթէ ոչ մեր
 նման սրտերու և բաղդերու հանդիպած
 բաներ . անանկ որ կրնանք ըսել թէ ա-
 նոնք մեզի ալ հանդիպած են գոնէ երևա-
 կայութեամբ, վասն զի միայն անոնք
 են որ հեռուէն ալ ըլլայ՝ դեռ մեզի հետ
 մասնակցութիւն մը ունին : Այլ թէ որ
 իմաստութեան ծայր սեպուեցաւ ինք-
 զինքը ճանչնալն, “ յանիր գբեզ ”,
 թէ որ ինքզինքը լաւ ճանչնալու համար
 պէտք է իրմէ առջիններն և ժամանակա-
 կիցներն ալ ճանչնալ, պէտք է պատմու-
 թիւն սորվիլ . ուրեմն պատմութիւնն
 է որ կրնայ տալ մեզի կատարեալ իմաս-
 տութիւն, որչափ որ կարելի է մար-
 դուս՝ իմաստուն ըլլալ երկրիս վրայ :
 Արկրից անսահմանութեան մէջ գլը-
 տրկող գնտերուն չափը քննել, ովկիա-
 նոսի անհուն ծոցը և յորձանքները չա-
 փել, մարդուս միտքը կ'ընդարձակեն և
 աշխարհքս կը մեծցնեն . սակայն ա-
 սոնցմէ մէկն ալ զմարդս մարդ չեն ըներ .
 ոչ միտքը կը կշտացնեն, ոչ սիրտը կը
 հանգչեցնեն, մանաւանդ թէ անոնց
 մէջ անանկ խորեր փոսեր կը բանան՝ որ
 ոչ ժամանակ և ոչ մարդկային կարողու-
 թիւն կրնան լեցնել : Իսկ պատմու-
 թեան գիտութիւնը այսպէս չէ, պարզ
 է . ասով մարդկութեան սիրտը կը փո-
 րուի ժամանակին խորութեան մէջ, և
 կ'ելլեն ծանօթ և օգտակար նիւթեր,
 վասն զի մեզի նման են . ասոնցմով
 մարդս կրնայ ստոյգ բան մը իմանալ, և
 իմացածն ալ իր վրան է, զինքն ճանչ-
 նալն է . ոյս ճանչնալը իրեն կը սորվե-

ցրնէ զինքը կրթել, լաւցրնել, կատարեալ ընել որչափ որ կարելի է . մէկալ գիտութիւնք մարդուս միտքը քիչ մը կը զարդարեն, հաստատուն բան մը չեն մտցրներ իր բնութեանը մէջ :

Աստիայն որչափ մարդիկ կան, որոնցմէ ոմանք իմաստուն ալ կ'ըսուին, որ պատմութեան հազիւ թէ ընդհանուր համառօտութիւն մը կարդացած, կամ միայն մասնաւոր ազգի մը պատմութիւն սորված, իբր թէ երկրիս վրայ միայն այն գաւառը մարդաբնակ ըլլար, կ'երթան բոլոր խելունքին օտար նիւթեր քննելու կուտան : Հազարաւոր տարիներէ վեր երկրիս ամէն կողմը միլիոնաւոր մարդիկ եկեր անցեր են մեզի նման, ասոնք ինչ են ըրեր, ինչ օրէնք, ինչ կրօնք, ինչ մտածմունք, ինչ զբաղմունք ունին եղեր . ասոնք քննելու տեղ, մէկը կ'երթայ չորս դին ճարտասանական գրքեր, բառգիրքներ կը շարէ, միտքը բան մը եկեր է կ'ուզէ գրել, կ'աշխատի նոր կերպով, վարպետ կերպով մը գրուցելու . արեւ բառին բացայտիչ մակդիր մը փնտռելու իր մըտքին յարմար՝ օր մը կ'աշխատի, կարծէ թէ գտածը ամենուն մտքին ալ յարմար պիտի ըլլայ, կամ կարդացողին աչքին ալ արեւուն լոյսը պիտի ծագէ՝ երբ որ այն բառը կարդայ : Մէկալն ալ ձկնորսի նաւակի պէս գրոց ալիքներուն մէջ կը մտնէ կ'ելլէ, շերեփին հետքուրաներուն մէջ կը խառնուի, գործիքի մը պէս իր գննութեանց գործիքներուն հետ կը զարնուի կը շտկուի, որպէս զի լաւ մը քննէ . ինչ . ոտքին կոխած ճճին, զարչելի գորտի մը սրունք, նապաստակի ականջ մը, թրթուրի թւին փողին, պղտիկ ճանճի մը պզտիկ գլխուն աւանապղտիկ աչքը : Մէկը իրեք չորս դծի և թուոյ համեմատութիւն գտնելու համար՝ կենաց մեծ մասը կը ծախէ, շատ հեղ ոչ կը վաստակի ոչ կը վաստակցրնէ . մէկալը ապակաւոր խողովակով երկնքին աստղերուն ետեւէն կ'իյնայ երկայն տարիներ, կարծես թէ ալ մեզի երկնքի այբուբենը պիտի սորվեցրնէ, բայց ստոյգը աս է որ այնչափ հա-

զարաւոր տարիներէ վեր դեռ հազիւ 10 հատ մոլորակ ըսուած աստղ ճանչցուեր է, բայց տասը հատիկ անմոլոր աստղաբաշխ ալ չէ տեսնուած : Իրաւ որ աս խելացի կամ իմաստուն մարդիկս որ իրենց նմաններուն բնական և բարոյական պատմութիւնը քննելը թողած՝ անանկ բաներու կը հետեւին բոլոր մըտքով՝ իմ խելքէս վեր խելացի են, ես չեմ կրնար զանոնք դատել, բայց ինծի այսպէս կ'երևնայ՝ որ եթէ աստղերը խելք ունենային և տեսնէին այս իմաստունքս որ մարդկային բնութեան զարմանալիքը թողած, որ ամէն արարածներէ ալ վեր և հրաշալի է, և ելեր իրենց ծածուկ ճամբաները և չափը կ'ուզեն գտնել, թէ որ ճանճերն ալ խելք ունենային և տեսնէին զանոնք որ մարդկութիւննին մոռցած եկեր գործիքներով իրենց քթին պատիճին ծայրը կը դիտեն, երկրիս խենթերուն առաջին կարգը պիտի դնէին մեր վերոյշեալ իմաստունները :

Չեմ կարծեր որ մէկը աս խօսքերէս կարծէ թէ պատմութեան զատ մէկալ գիտութիւնները իբր անօգուտ կը մերժեմ . չէ . ամէնքն ալ հարկաւոր կը սեպեմ քիչ շատ, պատմութիւնը ամենահարկաւոր սեպելէս ետև . պատմութեան գիտութիւնը՝ ինծի պէտք կ'երևնայ մարդուս, իսկ մէկալները՝ յաւելուած կամ հարստութի . պատմութիւնը զանոնք ալ կը սորվեցրնէ, անոնք զպատմութիւն չեն սորվեցրներ . անօթի մարդու մը աւելի լաւ է ձեռքը հաց մը ունենալը՝ քան գաշտերու մէջ ցանած ցորենները կամ արածող ոչխարները . և մերկի մը աւելի լաւ է քթանէ զգեստ մը ունենալը վրան, քան թէ զգեստին տեղ՝ փայլուն գոհարներ ունենալը . ասանկ ալ մէկալ գիտութիւնք թէ և գոհարներու պէս պայծառ երևնան, մտացներքին մերկութեան և անօթութեան օգուտ մը չեն ըներ, ինչպէս կ'ընէ պատմութիւնը : Միայն թէ մեր ուղած պատմութիւնն ալ՝ չըլլայ չոր ցամաք դիպուածներու պատմութիւն՝ ինչպէս լրագրաց ոճն է, կամ ազգաբանութիւն

մը , կամ միայն իշխողներու վարք , հա-
պա ժողովրդոց վարքը պատմէ իբրև
մէկ մարդու մը վարք կամ մէկ ընտա-
նեաց մը . անոր զանազան տարիքին զա-
նազան փոփոխութիւնները , մտքին ու-
ժը , սրտին բնաւորութիւնը , ձեռքին
յաջողութիւնը , պաշտած հաւատքը ,
ուրիշ ազգաց հետ համեմատութիւնը :
Եւ գրուած պատմութիւնը կ'արժէ՝
որ ինչպէս մէկը Պրուտարքոսի պատմու-
թեան համար ըսաւ , թէ որ աշխարհ-
քիս ամէն գրքերն ալ ջնջուելու ըլլային՝
միայն զայն ապրեցրնէին :

Եսանկ պատմութիւն մը թէ գիտուն
թէ տղէտ ըսուած մարդկանց զուար-
ճալի և օգտակար է . որ ձեռքէդ կը
բռնէ՝ աշխարհիս սկզբնէ վեր՝ ժամա-
նակին հետ զքեզ կը քայցրնէ . ամե-
նուն ալ հանդիսատես և քննող կ'ըլլաս .
և զանոնք քննելու ատեն՝ ինքզինքդ ալ
կը քննես . կը տեսնես թէ ինչպէս
մարդկութեան առաջին ընտանիքը ա-
ճելով՝ ընտանեկան կեանքը կամաց կա-
մաց քաղաքական կառավարութիւն կը
փոխուի . և այս կառավարութիւն ալ
ինչպէս կը զանազանի այլ և այլ տեղ .
ինչպէս անոնցմէ ոմանք կը ծաղկին ու-
մանք չէ . ոմանք աշխարհակալ կ'ըլլան ,
ոմանք խաղաղասէր աշխարհագործ . մէ-
կը հովուութեամբ և երկրագործու-
թեամբ կ'ապրի , մէկալը շահասէր վա-
ճառահանութեամբ . մէկը մտաւոր գի-
տութիւններ կը սիրէ , մէկալը ձեռնա-
ւոր կամ արուեստաւոր : Ինչո՞ւ մէկ ազգ
մը 4000 տարու ընէ ՚ի վեր կեցեր է ,
մէկալը անցեր գնացեր է . մէկը թէպէտ
և անցեր՝ բայց յաւիտենական բրգունք-
ներ իրեն նշան է թողած , մէկալը ա-
մենեին հետք մ'ալ չունի : Ինչո՞ւ եր-
կու ազգ նոյն օրէնք նոյն սովորութիւն
չունին և չեն կրնար անոր յարմարիւ-
արդեօք կլիմայէն է այս տարբերու-
թիւնը . թէ որ այնպէս է՝ ինչո՞ւ նոյն
կլիմայի տակ եղողներն ալ զանազան
բնաւորութիւն ունին , կամ ինչո՞ւ նոյն
երկրին վրայ զանազան ազգեր յաջոր-
դաբար կամ միատեղ բնակելով՝ երբեմն
նոյն երբեմն տարբեր բնութիւն կ'ու-

նենան . ինչո՞ւ մէկը օտար կլիմայի տակ՝
բնութիւնը կը փոխէ , մէկալը ամէն կլի-
մայի ալ կը յարմարի անփոփոխ բնու-
թեամբ , ինչպէս տնկոց վրայ կը տես-
նենք : Ինչ պատճառաւ եղած են ազ-
գաց մէջ մեծամեծ փոփոխութիւններ ,
խռովութիւններ , միաբանութիւններ ,
պատերազմներ . ինչպէս տեղ տեղ ազա-
տական իշխանութիւններ եղած են ,
տեղ տեղ բռնաւորական : Երօքը ինչ
ազգեցութիւն ունեցեր է մարդկանց
վրայ , և ինչ փոփոխութիւններ կամ
մտածութիւններ եղեր են կրօնքի : Ե-
րուեստ , գիտութիւն , քաղաքականու-
թիւն ինչպէս ծաղկեր է և կը ծաղկի :
Ինչ է հին աշխարհք և նոր աշխարհք .
ինչ է արեւելք մը , ինչ է արեւմուտք
մը . ինչէն է զանազանութիւն ախորժա-
կաց . ինչէն է երջանկութիւն և թշուա-
րութիւն ազգաց , ինչէն հարստութիւն
և աղքատութիւն , և այլն :

Ե՛հա այսպիսի և նման ծանօթու-
թիւններով պատմութիւնը կ'ըլլայ մար-
դուս՝ « Համառօտ կենաց՝ երկայն փորձ , »
ինչպէս ըսաւ պատմիչ մը , որով մարդ
զինքն ալ իրեն նմանեաց բազմութիւնն
ալ կրնայ կառավարել . և ասոնցմով
կրնայ յայտնի տեսնել Եստուծոյ նա-
խախնամութիւնը երկրիս վրայ , կամ
մարդկան և Եստուծոյ հետ կապը . ա-
նոր համար պատմութեան գիտութիւնը
հարկաւոր է մարդուս թէ՛ իբրև ա-
ռանձին մարդ և թէ ընկերական անձն .
և ամէն աստիճանի մարդու ալ նոյնպէս
հարկաւոր է , ինչպէս որ ամենուն ալ
զուարճալի է պատմութիւնը :

Եւ այց թէ որ ամենուն ալ հարկաւոր
է ընդհանուր պատմութիւնը , կայ պատ-
մութիւն մ'ալ որ ոմանց հարկաւոր է
մասնաւոր կերպով . այս է Եգգային
պատմութիւն , իւրաքանչիւր ազգի յա-
տուկ . որ է իբրև վկայական մը իրեն
կենդանութեան և հարազատութեան
մէկալ ազգաց առջև . ով որ չունի այս
պատմութիւնը՝ վատազգի է և վատա-
սիրտ : Եգգային պատմութիւն՝ ամէն
ազգի յատուկ սրբազան գիրքն է կ'ըսէ
հեղինակ մը , որ ուրիշ գրքերէ աւելի

պէսք է կարդայ և գիտնայ . անոր հա-
մար խելացի ազգեր , թէպէտ և ամէնքն
ալ շատ պահասաւոր գտուած են ընդ-
հանուր պատմութիւն սորվելու մէջ , գո-
նէ իրենց ազգինը մասնաւոր հոգով կը
սորվին . նմանինք մենք ալ անոնց : Իսկ
թէ ինչու և որչափ մեծ պարտք և հար-
կաւոր է ազգային պատմութիւնը գիտ-
նալ , Վրացասիրութեան վրայ գրածնիս
բաւական սեպուին իմացընելու : (Թէ
որ հռովմայ և Յունաց կամ Վազղիա-
ցոց պատմութեան մէջ զարմանալի և
զուարճալի դիպուածներ շատ կան , չը-
կարծենք թէ միայն անոնց մէջ են , կան
ուրիշներուն մէջ ալ , կան հայու պատ-
մութեան մէջ ալ . թէպէտ և պատմու-
թեան չվայլեր զուարճալի և փառաւոր
դիպուածներ փնտռել , հապա ճշմար-
տութիւն ուզել : Եւսկայն ո՞վ կրնայ չզար-
մանալ և չզմայլել երբ ազգի մը սկիզ-
բը Վրայ տապանին դրանքով կը գտնէ
յայտնապէս . և այն նախաջրհեղե-
ղեան ընտանիքը՝ հայաստանի մէջ եր-
կորդ անգամ ապրած և թաղուած կը
գտնէ : Արբ կը տեսնէ հայկ մը որ իր
քիչուոր կտրիճներովը աշխարհիս ա-
ռաջին և մեծագոյն բռնաւորին և բա-
նակին կը յաղթէ , և իր ազգին այնպէս
պանծալի կերպով նախահայր կ'ըլլայ .
— Բրամ մը՝ որ հայրենասիրութեամբ
աշխարհը ազատեւէն զատ՝ Փոքր Վսիոյ
ալ տիրած՝ հոն Վստուծոյ պէս կը պաշ-
տուի . — Բրայ մը՝ որ Վսիոյ ինքնակա-
լութենէն և Շամիրամայ կենակցու-
թենէն վեր դնելով օրինաւոր հաւա-
տարմութիւնը՝ քաջութեամբ և խել-
ճութեամբ կը մեռնի , Վեղեցիի անու-
նը թողած արժանի սրտին և երեսին .
— Տիգրան մը՝ որուն Վճ հրաւէրք կու-
տայ Արեմիայ մարդարէին ձեռքով՝ որ
գայ և Արևրոսին հետ Ռաբելացոց բռ-
նաւորութիւնը վերցընէ , ինչպէս որ Սա-
րացը վերուց . Տիգրանուհոյ իմաս-
տութիւնը և ընկած վտանգը ու ազա-
տիլը , սքանչելի չեն . — Բրտաշէս Ա ,
որ ցամաքաբնակ ժողովուրդը յանկարծ
ծովակալ կ'ընէ , Յունաստանը իրեն

1 Տես 7 և 9 տեսրակները :

կուռքերովը , քրմերովը գերի բերելով
ի հայաստան . — Տիգրան մը որ հօ-
րը և Սիհրդատայ հետ Վրէքսանդրէն
վերջը առաջին աշխարհակալ կ'ըլլայ
Վսիոյ մէջ , թագաւորները իրեն ծա-
ռայ ընելով . — Բրգար մը որ Վրիս-
տոսի Վստուծոյ հետ թղթակից կ'ըլլայ .
— Բ Բրտաշէս , որուն բոլոր պատ-
մութիւնը բանաստեղծութեան պէս
զուարճալի է . — Ս աղարշ մը որ քաջու-
թեամբ յաղթելով թշնամեաց՝ բանա-
կին մէջ կը մեռնի . — Իյտարով մը որ
տասը տարի Պարսից տունը կ'աւրէ . իր
մահուան դիպուածը , Տրգատայ աննը-
ման գործքերը , Վրիգոր Լուսաւորչայ
և հռիփսիմեանց դիպուածները որ լի
են զարմանալի , ահաւոր , սրտաշարժ ,
և զիւցազնական աստուածային տե-
սարաններով : — Բայց խիստ երկայն
կ'ըլլար նաև պարզ յիշեն ալ մեր Բ
Բրշակ թագաւորին և մեծին՝ Վերսիսի
օրերուն դիպուածները . նոյնպէս Բը-
շակունեաց թագաւորութեան վերջա-
նալը , Սարգանանց և Վ Լոնդեանց
նահատակութիւնը , Սահանայ քաջու-
թիւնները . այսպէս Ռազրատունեաց
և Սուբինեանց ատենի ալ զանազան դի-
պուածները , Ա Սմբատայ քաջութեամբ
և վկայութեամբ մահը , Արկաթ Բ
չտոյ քաջագործութիւնները , վերջին
Վագկայ բռնի և սրտակտուր կերպով
հրաժարիլը թագաւորութենէն , Վնե-
ցոց ըրած ողբը Ռազրատունի թագա-
ւորաց գերեզմաններուն վրայ , Վագկայ
մահը , թորոսի և Վ Լոնի քաջութիւն-
ները Յունաց և այլազգեաց դէմ . հեթ
մոյ երկայն ճամբորդութիւնը թաթա-
րաց Վ անին քով , և իր սրտաշարժ
հարցմունքը , թէ Սըր են իմ Վ Լոնս և
թորոսս , (որոնց մէկը պատերազմի մէջ
մեռեր՝ մէկաւն գերի էր ընկեր իր ճամ-
բորդութեան ատեն) . Վ էնկ թիմուրայ
արշաւանքը՝ ի հայաստան , որուն ան-
գթութեան քարոզ կը կարդան ինչուան
այսօր Սեբաստիոյ Սև հողերը . Շ ա-
հաբասայ վերջին հարուածը հայաս-
տան աշխարհին , և Ս ուղայեցոց խրդ-
ճալի բաժանմունքը իրենց պայծառ հայ-

րենիքէն, եկեղեցիներուն և քաղաքին բանիքները սուրբ Բստուածածնայ յանձնելով և Նրասի գետին պղտորած ալեաց մէջ ձգելով. և այլն և այլն :

Բսոնք և ասոնց պէս անթիւ դիպուածներն՝ թէ որ մեր Խորենացին ուզեր փոխանակ իր յատուկ աննման ոճոյն՝ Ի իւրոսի կամ Թուկիտիդեսի զարդարուն և հիւսուածոյ ոճովը պատմել, կամ ետևի եկող պատմիչներն ալ կարենային նոյնպէս ընել, որչափ զարմանալի պիտի ըլլար հայոց պատմութիւնը անոնց ալ՝ որ յունական և լատինական ճարտասանութեան գերի եղած՝ կը կարծեն թէ անոնց պատմած

դիպուածներն ալ աննման բաներ են : Բննուն ուրեմն հայոց ճարտասանքն ալ իրենց գրիչը և գրեն հայրենեաց պատմութիւնը . ես կը յուսամ որ զանոնք կարդալով կամ լսելով մեր հայերն իրենց հիմակուան տգիտութեան և բրտութեան վիճակին մէջ ալ, աւելի զգայուն պիտի գտուին քան զբարբառոս Յոյները, որ Ուիմպիական զուարճալի խաղերը դադրեցուցին՝ երբոր Երոզոտոս իր պատմութիւնը սկսաւ կարդալ, և աւելի սիրելի ըլլայ իրենց աստուածահիմն հայաստանը՝ քան անոնց առասպելածին Յունաստանը :

Հ. Դ. Մ



Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն



Հին Վաղղիացոց կամ Վեղտաց Վրայ համարօք արդէնութիւն :

Հին Վաղղիացոց կամ Վեղտաց աշխարհին սահմանը կը սեպուի հիւսիսէն Բրիտանեան Ովկիանոսը . արևելքէն հռենոս գետը, Վերմանիան, Բլպեանց ու Խաւիոյ մէկ մասը . հարաւէն Միջերկրական ծովը, Պիրենեանք ու Սպանիա . արևմուտքէն ալ մեծ Ովկիանոսը : Վեղտ ըսուելուն

պատճառը՝ հին ու նոր մատենագիրներէն ոմանք աս կը կարծեն թէ Վիւնիկեցոց լեզուին քաղը-ը բառէն առաջ եկած ըլլայ, որ ինչպէս մեր լեզուին՝ սասանկ ալ իրենց մէջ գաղթական կամ հայրենի երկրէն դուրս ելլող ըսել է եղեր : Ոմանք ալ կը կարծեն թէ երկրին բնիկ Ժողովուրդը Վալ կամ Վաէլ